

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ\*

Ա. Ա. ԽԱԶՍՐՅԱՆ, կապիտան, բանասիրության մագիստրոս,  
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԳՀԿ պատասխանատու քարտուղար



**Ներածություն**

Հայոց պատմության նորագույն շրջանի ուսումնասիրությունը աներկբայորեն վկայում է, որ մեր հասարակության կյանքում ռազմական բաղադրիչն ունի մեծագույն դեր: Հասարակության տարբեր շերտերի, տարբեր մակարդակի կրթվածությամբ, տարբեր մտահորիզոն ունեցող մարդիկ քննարկում են այնպիսի հարցեր, որ կապ ունեն ռազմական ոլորտի հետ՝ անխուսափելիորեն կիրառելով այդ ոլորտի տերմիններ: Հնուց ի վեր տարատեսակ ռազմական բախումներին նախորդող և հաջորդող շրջաններում թե՛ գորքի, թե՛ ժողովրդի բարոյահոգեբանական վիճակի վրա լրջորեն ազդել են խոսքի միջոցով: Այն կարող է ունենալ ինչպես բացասական՝ պարտվողական, բարոյալիք, այնպես էլ հակառակը՝ միավորիչ, ուժեղացուցիչ, բարձր ազգային գիտակցություն ձևավորող ազդեցություն<sup>1</sup>: Խոսքը սահմանվում է իբրև «1. Խոսելու ունակություն, մտքերը բառերով արտահայտելու կարողություն: 2. (լեզվբ.) Լեզվի իրական դրսևորումը որպես հաղորդակցման միջոց: 3. Առհասարակ՝ լեզու: 4. Այն, ինչ որ խոսվում՝ խոսվելու է, խոսվածը, ասածը, ասելիքը: 5. Խոսակցություն, զրույց: 6. Նախադասություն, արտահայտություն: ... 8. Բառ: ... 10. Ճառ, ելույթ, բանախոսություն: Ներածական՝ բացման խոսք: ... 15. Լեզվի ոճ, խոսքային այս կամ այն տեսակը: Բանավոր՝ գրավոր՝ հեղինակային՝ չափածո խոսք: 16. փխբ. Միտք, նշանակություն, իմաստ: Շատ քչերն են ըմբռնում լռության խոսքը (Մուրացան): ... 21. Տե՛ս Նախադասություն»<sup>2</sup>: Խոսքի ազդեցությունը գործնականում ցույց տալու նպատակով դիտարկել ենք ռազմագիտական ոլորտի որոշ տերմինների գործածության ազդեցության հետևանքները՝ հատկապես նկատի ունենալով, որ արդի պատերազմավարության լեզվական բաղադրիչի դերի ուժեղացումն ունի անվտանգային նշանակություն, ուստի լեզվաբանական ուսումնասիրություններում, մեր կարծիքով, պետք է հատուկ ուշադրություն դարձնել ռազմական ոլորտի լեզվի վրա:

\* Հոդվածն ստացվել է 02.09.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 31.10.2024:

<sup>1</sup> Տես *Kenneth Burke. The War of Words.* Oakland, California, 2018:

<sup>2</sup> Տես *Է. Բ. Աղայան*, Արդի հայերենի բացատրական բառարան: Ե., 1976, էջ 597:

## Պատերազմն ու խոսքը

Ուզանական բնագավառում կան խոսքի էական նշանակության բազմաթիվ օրինակներ ու հիշատակումներ, կան փոխանցված բազմաթիվ մարտական կոչեր: Այսպես՝ Նժդեհը ասել է. «Հաստատ կարելի է պնդել, որ հրաշագործության սկիզբը դրվեց խոսքով... Կռվադաշտը գուցե և միակ տեղն է, ուր ամեն բանից ավելի և ամեն բանից սուր է զգացվում բարոյապես ազդելու՝ մտքերի, սրտերի և կամքերի վրա իշխելու կարիքը: Այն, ինչ հաճախ դժվարանում է անել արագածիզ ու հեռածիզ թնդանոթը, հեշտությամբ կատարում է դեկավարի զորավոր խոսքը: Առանց զորավոր խոսքի բուրբ են սրերը, թույլ՝ բազուկները, անվճռական՝ կամքերը»<sup>3</sup>: Ուզանադաշտում խոսքի կարևորությունը ցույց տվող այս դիպուկ տողերը արդիական են նաև տարբեր մասշտաբի ուզանական գործողություններից առաջ և հետո անխուսափելիորեն ձևավորվող նոր տեսակի մարտադաշտում: Այդ մարտադաշտը քարոզի, համոզումունքների, ընկալումների տարածություն է, որտեղ զխավոր զենքը խոսքն է, և առաջանում է «բառերի» նորաբնույթ պատերազմ<sup>4</sup>: Այս երևույթը միս ու արյուն է ստանում, սահմանվում են դրան առնչվող հասկացություններ ու տերմիններ, գործողությունների տեսակներ, օբյեկտներ և սուբյեկտներ:

Այսօր մեր առօրյայում տեղեկատվատեխնոլոգիական միջոցների բազմազանությունը անընդհատականությամբ մեզ կապում է խոսքի հետ. մենք կարդում, լսում ենք տարաբնույթ տեղեկություններ՝ ըստ այդմ հայտնվելով որոշակի հոգեհուզական վիճակներում: Հետևաբար այսօր խոսքի ազդեցությունն ավելի է աճել:

Մեծ տարածում ստացած տեղեկատվահոգեբանական պատերազմը\* (ՏՀՊ) կողմերի ընդդիմամարտություն է, որն իրագործվում է հակառակորդի (ժողովուրդ, կոլեկտիվ կամ անհատ) գիտակցության վրա միտումնավոր, **ամենից առաջ՝ խոսքային ազդեցության** ձանապարհով, ինչպես նաև տեղեկատվահոգեբանական պաշտպանության միջոցների կիրառմամբ յուրաքանչյուր կողմին նման ներգործությունից պաշտպանելով<sup>5</sup>:

Ինչպես նշվեց, խոսքը, ընդհուպ մինչև բառը, կարող է ունենալ ինչպես իրադրությունը փրկող, այնպես էլ կործանող ազդեցություն: Օրինակ՝ 1918 թ. մայիսի 16-ին՝ մեր երկրի ու ազգի համար օրհասական պահին, «ամենայն

<sup>3</sup> Տես Վ. Ղևորյան, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921): Ե., 1991, էջ 16:

<sup>4</sup> Տես H. Footitt, S. Tobia. The War of Words: Psychological Warfare in a Foreign Language. "WarTalk: Foreign Languages and the British War Effort in Europe, 1940-47". London, 2013, PP. 69-90, նաև՝ A. Briggs. The War of Words 1939-1945. Oxford University Press, 1995:

\* Պատերազմի այս տեսակը Արևմուտքում ընդունված է կոչել հոգեբանական (psychological warfare), ՌՂ-ում՝ տեղեկատվահոգեբանական (информационно-психологические войны):

<sup>5</sup> Տես A. A. Бернацкая, И. В. Евсеева. А. В. Колмогорова. Лингвистика информационно-психологической войны. Книга 3. Красноярск, 2020:

հայոց բանաստեղծ» Հովհ. Թումանյանը լռեցիներին դիմելիս մի միտք է ասում. «Իմ քաջ լռեցիներ, **փոքրաթիվ** թշնամին հասել է մեր լեռներին...»<sup>6</sup>: Որքան դիպուկ է մեծն Թումանյանը գործածում **փոքրաթիվ** բառը: Անելանելի վիճակում գտնվող հայությունը՝ պաշարված զանազան կողմերից, ելել էր պայքարի, և հնարավոր է, որ մոտեցող թշնամու մեծաթիվությունը հուսալքության ու դասալքության պատճառ դառնար:

Եվ հակառակը՝ լրատվականներով լուր էր տարածվել մեր սահմանագոտի **հետախուզական-դիվերսիոն խմբի** ներթափանցման մասին<sup>7</sup>: Մամուլի տարբեր հոդվածներում նշվում էր, որ մեկը ձերբակալված է, իսկ «մնացած խումբը դեռ որոնվում է»: Ընդհանուր առմամբ դիվերսիոն-հետախուզական **խումբը** կազմված է մինչև 20 հոգուց<sup>8</sup>: Հետագա հաղորդագրություններից պարզվում է, որ խոսքը երկու մարդու մասին է: Այս դեպքում նշված «դիվերսասնտների խումբ» արտահայտությունը կարող է գործել տարբեր տեսակի բացասական ազդեցություններ: Թշնամու ազատ շրջող խմբի մասին տեղեկությամբ ոչ միայն նշված տարածքի, այլև ամբողջ բնակչության շրջանում կարող էր առաջացնել վախ և խուճապ: Բացի մամուլի տարածած ապատեղեկությանց այս տեսակ խոսքի գործածությունը մի ուրիշ վտանգ ևս ունի. այն կարող է լինել նաև ձեռնածուական. այսինքն՝ դրա տարածման աղբյուրը կարող է լինել հակառակորդ պետությունից:

*ՏՀՊ ռազմավարությանը ընդհանուր առմամբ ենթադրվում է, որ հիմնական նպատակը պետք է լինի ստեղծվող հոգեբանական անկայունության մթնոլորտում պայքարի օբյեկտի կամազրկումը<sup>9</sup>: Էլեկտրոնային մամուլով, հեռուստատեսությամբ, ինչպես պաշտոնական, այնպես էլ անհատ բլոգերների տարածած տեղեկությամբ կարելի է առաջացնել խուճապ ու հուսահատություն: Թեև տեղեկատվահոգեբանական պատերազմներում զխավոր «գործող անձը» զինվորականը չէ, բայց և առաջվա նման դրանց «մթերքը» զգալի չափով գալիս է զինվորական աղբյուրներից:*

Մեր օրերում խոսքի միջոցով ազդելու հաճախականության և ծավալների հաշվառմամբ որոշ առաջատար պետություններում առանձնացվում է տեղեկութահոգեբանական պատերազմների լեզվաբանությունը: Ռուսաստանում հատկապես հիմա՝ ռուս-ուկրաինական հակամարտության շրջանում, մեծ ուշադրություն են դարձնում ներկայացվող լուրերի բառապաշարին, արտահայտչաձևերին՝ դրանց գնահատականներով ու որակումներ-

<sup>6</sup> Տես *Գ. Բ. Ղարիբջանյան*, Մայիսյան հերոսամարտերի արձագանքները: «ՀԲ», 1998, հմ. 2:

<sup>7</sup> Տես *Ս. Սաֆարյան*, Չախողված ադրբեջանական դիվերսիայի հետաքննություն. ի՞նչ ուղերձ է պարունակում այն-2: «Հետք», 17.07.2014 (<https://hetq.am/hy/article/55704>):

<sup>8</sup> Տես «Диверсионно-разведывательная группа». «Военный энциклопедический словарь» ([https://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details\\_rvsn.htm?id=13020@morfDictionary](https://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details_rvsn.htm?id=13020@morfDictionary)):

<sup>9</sup> Տես *Ralf E. Streibl*. Psychologische Kriegführung und „Information Warfare“, 2010 (<https://www.friedenskooperative.de/friedensforum/artikel/psychologische-kriegfuehrung-und-information>):

րով: Օրինակ՝ ռուսական ՏՀՊ լեզվաբանությունում առանձնացվում է «արևմտյան արժեքներ գաղափարայթը» (*идеологемы «Западные ценности»*), այսինքն՝ հաղորդագրություններում գնահատվում են տեղեկույթի ձեռնածուականությունն ու հավանական ազդեցության ծավալները<sup>10</sup>:

Խոսքի և դրա միավորների ընկալման, վերլուծության և ազդեցության մեխանիզմները հասկանալու հարցում առանցքային է **հոգելեզվաբանության** դերը: Հոգելեզվաբանությունը այն մտածողական մեխանիզմների ուսումնասիրությունն է, որոնց շնորհիվ մարդը կիրառում և ընկալում է լեզուն<sup>11</sup>: Ըստ էության՝ հոգելեզվաբանության երկու հիմնական հարցերն են. ի՞նչ լեզվական գիտելիքներ են անհրաժեշտ տվյալ լեզուն գործածելու համար, և ի՞նչ ճանաչողական պրոցեսներ են տեղի ունենում լեզվի գործածության ժամանակ<sup>12</sup>: Այլ կերպ ասած՝ մենք պետք է իմանանք լեզուն, որպեսզի այն գործածենք, թեև, հաճախ լիովին չենք գիտակցում մեր լեզվական գիտելիքների սահմանները: Այսպես. մենք գործածում ենք բառեր (տերմիններ), որոնք ընդհանուր առմամբ հասկանում ենք, թեև չենք գիտակցում դրանց սխալ լինելը:

Հոգելեզվաբանները ուսումնասիրում են, թե ինչպես են բառիմաստը, նախադասության իմաստը և քննարկման (դիսկուրս) իմաստը արտապատկերվում ուղեղում: Նրանք հետազոտում են, թե ինչպես են բառերը և նախադասությունները միավորվում՝ կազմելով խոսք, և ընթերցման կամ ունկնդրման ժամանակ տրոհվում բաղադրատարրերի<sup>13</sup>: Ըստ այդմ՝ ցանկացած գործածած բառ ինչպես գործածողի, այնպես էլ լսող-ընթերցողի ուղեղում ստեղծում է որոշակի ընկալումներ, որոնցից առաջանում են համապատասխան հույզեր, տպավորություններ: Այսպես, օրինակ, նույն գործառնությունները կատարող յուրային և թշնամի զինվորականին տարբեր անուններ ենք տալիս՝ **հետախույզ** և **լրտես**. սրանցից յուրաքանչյուրը լեզվակրի ուղեղում տարբեր կերպ է ընկալվում:

### **Ռազմագիտական ոլորտի լեզուն. զե՞նք, թե՞ թիրախ**

Մասնագիտական գրականության մեջ և հրապարակումներում հիմնավոր կերպով ցույց է տրված լեզվական միջոցների աղավաղման ազդեցությունը լեզվամտածողության վրա՝ դրանից բխող հետևանքներով<sup>14</sup>: Մի

<sup>10</sup> Տես *Е. А. Иванова*. Специфика репрезентации идеологемы «Западные ценности» в американском медийном дискурсе (на материале английского языка). «Филологические науки. Вопросы теории и практики», 2019, т. 12, вып. 12 (<https://cyberleninka.ru/article/n/spetsifika-reprezentatsii-ideologemy-zapadnye-tsennosti-v-amerikanskom-mediynom-diskurse-na-materiale-angliyskogo-yazyka>):

<sup>11</sup> Տես *A. Garnham*. Psycholinguistics: Central Topics. London and New York, 1985:

<sup>12</sup> Տես *D. W. Carroll*. Psychology of Language. 5<sup>th</sup> ed. Belmont, CA, 2008:

<sup>13</sup> Տես *William O'Grady, John Archibald*. Contemporary Linguistic Analysis: An Introduction. Toronto, 2016, P. 391:

<sup>14</sup> Տես, օրինակ, *Е. В. Кузнецова*. Язык и национальная идентичность. «Омский научный вестник», 2011, № 3 (<https://cyberleninka.ru/article/n/yazyk-i-natsionalnaya>):

շարք գիտնականներ հսկայածավալ աշխատություններ են գրում՝ ցույց տալով բառերի դերը լեզվամտածողության, հաղորդակցման, լեզվական ազդեցության գործերում: Պատահական չէ, որ մի շարք հեղինակավոր հետազոտողներ իրենց աշխատությունները անվանել են խոսքերի (բառերի) պատերազմ<sup>15</sup>: «Տեղաշարժերի տեսակետից լեզվի բառային կազմում առավել ուշագրավ է տերմինային շերտը, քանի որ տերմինների միջոցով հաղորդվում են խիստ սահմանազատված իմաստներ... Տերմինի մեջ պետք է հստակ համադրվեն ձևն ու բովանդակությունը, այսինքն՝ դրանում պիտի ճշգրիտ արտացոլվեն այն հասկացությունները, որոնք ստեղծվել են «տվյալ» հասարակության մարդու մտածողությամբ»<sup>16</sup>: Տերմինները խոսքում ունեն առանցքային նշանակություն, ահա թե ինչու սրանց սխալ կիրառությունը կարող է ավելի ազդու լինել, քան տվյալ լեզվալուրտի բառապաշարի մյուս շերտերի դեպքում:

Օրինակ՝ որն է մարտական գործողությունների վարման շրջանում կիրառվող օտարալեզու «մանյովր» (*маневр* - *maneuver*) տերմինի հայերեն համարժեքը: Որոշ թարգմանություններում այն «խուսավարում»-ն է, մինչդեռ այն նշանակում է մարտական գործողությունների նախապատրաստման ու վարման ժամանակ զորքի որոշակի մասի կազմակերպված տեղափոխում դեպի նոր ուղղություն, ինչպես նաև կրակի, հրթիռային զորքերի ու ավիացիայի հարվածների տեղափոխում նոր նշանակետերի: Ասել է թե կատարվում է **տարաշարժ**<sup>17</sup>: Եթե որևէ լրատվական նշի, որ մեր զորքը մարտում խուսավարել է, տպավորություն կստեղծվի, որ զորքը փախել կամ խուսափել է մարտից, ինչը միանշանակ կերպով կառաջացնի լսարանի տագնապն ու հուսահատությունը: Հետևաբար սխալ թարգմանությունն ընդամենը բառագործածում չէ, այլ կարող է դառնալ բարոյահոգեբանական

---

identichnost/viewer); *Ortrun Huber. Wie wir mit Sprache die Welt erobern*, 2024 (<https://www.ardalpha.de/wissen/sprache-sprechen-mensch-fremdsprache-wort-deutsch-100.html>), *Ղ. Ս. Չիլինգարյան*, Ազգը, ազգային ինքնությունը և լեզուն՝ որպես հոգևոր անվտանգության առանցքային օբյեկտներ. եռալեզու պաշտպանական-անվտանգային բառարանը՝ որպես լեզվի բնագավառում համատեղայնացման օրինակ: «ՀԲ», 2018, հմ. 3:

<sup>15</sup> Տես օրինակ, *Molly Guphill Manning. The War of Words: How America's GI Journalists Battled Censorship and Propaganda to Help Win World War II*. Ashland, OR, 2023; *Paul David Tripp. War of Words: Getting to the Heart of Your Communication Struggles (Resources for Changing Lives)*. Paperback. P & R Publishing, 1 January 2000; *Kyle Nappi. War of the Words: Lessons in Psychological Operations from the Eastern Front in World War II*. "Modern War Institute", 06.07.2023 (<https://mwi.westpoint.edu/war-of-the-words-lessons-in-psychological-operations-from-the-eastern-front-in-world-war-ii/>):

<sup>16</sup> Տես *И. К. Кусикьян. Изменение в словарном составе литературного армянского языка со ветского периода*. М., 1964, с. 9: Բերված է ըստ՝ *Ա. Ղ. Մարտիրոսյան*, Դիտարկումներ հայերենի նորագույն ռազմագիտական տերմինաբանության զարգացման միտումների շուրջ: «ՀԲ», 2001, հմ. 3:

<sup>17</sup> Տես *Ղ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 570:

ազդեցության աղբյուր և անգամ հարց առաջացնել. ո՞վ է տվյալ տեղեկույթը տարածողը և ի՞նչ նպատակով է դա անում:

Ռազմագիտական տերմինաբանության մեջ տարանջատվում են **նահանջ** և **հետքաշում** տերմինները: Սրանցից **նահանջը** ռազմական (մարտական) գործողությունների տեսակ է. գորքերի հեռացումը զբաղեցրած բնագծերից ու տեղափոխումը յուրային տարածքում գտնվող նոր բնագծեր (շրջաններ) հետագա ռազմական գործողություններ վարելու և միջոցների նոր խմբավորում ստեղծելու համար<sup>18</sup>: Սակայն որքան ասհարկու էր հասարակության վրա ազդեցությունը, երբ հաղորդվում էր, որ մեր գորքը նահանջել է: Սրան հակառակ նույնատիպ չէր ընկալումը, երբ կիրառվում էր **հետքաշում**<sup>19</sup> տերմինը: Սա իրենց զբաղեցրած բնագծերից (շրջաններից) գորքերի (ուժերի) մտադրված կամ հարկադրված հեռացումն ու հետխաղացումն է՝ գերազանցող հակառակորդի հարվածների տակից գորքը դուրս բերելու և հետագա գործողությունների համար ավելի նպաստավոր դիրք գրավելու, մյուս ուղղություններում օգտագործելու համար ուժեր ազատելու նպատակով: Հասարակությունը հետքաշումը ընկալում է որպես նպատակային գործողություն, հիմնավորված տարաշարժ և ըստ այդմ չի մատնվում խուճապի:

Նույնը կարելի է ասել «պարտվել» և «անհաջողության մատնվել» զույգի մասին: Առաջինը խուճապի առիթ է, մինչդեռ ճակատի ինչ-որ հատվածում գորքի կրած անհաջողությունը կարող է համակշռվել մյուս մասում հաջողությամբ:

Միայն բառագործածումը կարող է առաջացնել խառնաշփոթ, ինչպես, օրինակ, **կրակակոծում – հրետակոծում – ռմբակոծում – գնդակոծում** տերմինները իրենց տեղում չգործածելը: Այստեղ կարող է առաջանալ հետևյալ խնդիրը. շարքի վերջին երեք տերմինները նշանակում են որոշակի տեսակի զենքից կրակ արծակել, օբյեկտը դրանց կրակով խոցել, իսկ առաջինն ընդհանրական է և նշանակում է բոլորը կամ դրանցից մի քանիսը միասին վերցրած: Եվ եթե հաղորդվում է, որ այսինչ քաղաքը և գյուղը «գնդակոծվել» է, ապա ունկնդիրը կենթադրի, որ վնասները մեծ չեն, և հակառակը: Միևնույն ժամանակ, տերմինը կարող է ունենալ «գաղտնագրային» արժեք. իրագել հասարակությունը, որը տարբերում է այս տերմինների բառիմաստները, կարող է մման սխալների միջոցով տարանջատել ձեռնածուական տեղեկույթը ճշգրիտից. օրինակ՝ «հակառակորդը *գնդացիրներով հրետակոծել է այսինչ գյուղը*» նախադասությամբ արդյոք չեն փորձում գործել խուճապ և ընկճման ազդեցություն:

Մեկ այլ օրինակ. զոհված կամ վիրավոր զինծառայողների ընտանիքի անդամների հետ տարվող աշխատանքներում նրանք հանդես են գալիս

<sup>18</sup> Տես «Ռազմական ոլորտի կարևոր հասկացությունների հանրագիտարանային բառարան (նախագիծ)»: «US», 2021, հմ. 1-2, էջ 92:

<sup>19</sup> Տես «Ռազմագիտական հասկացությունների և տերմինների հանրագիտարանային բառարան (նախագիծ)», մաս 2: «US», 2022, հմ. 9, էջ 57:

որպես «պատերազմից տուժած շահառուներ»: Այստեղ հանդիպում ենք օքսիմորոնի՝ իրար հակասող բառերը իրար են լրացնում, այն էլ՝ բավական անպատեհ ենթատեքստով: Թեև այս մարդկանց որոշակի սոցիալական օգնություն է հատկացվում, սակայն նրանք *շահառուներ* չեն, այստեղ «շահ»-ի մասին խոսք լինել չի կարող, որովհետև որևէ շահ չի կարող հատուցել ընտանիքի անդամի գոհվելը կամ ցմահ հաշմվելը, սակայն հետզհետե, դառնալով սովորական բառակապակցություն, այն ձևավորում է նաև տվյալ մարդկանց նկատմամբ որոշակի վերաբերմունք:

Ուազմագիտական ոլորտում առանձին նշանակության տերմիններ են դառնում այն հայերեն բառերը, որոնք գեղարվեստական գրականության մեջ կարող են համարվել հոմանիշներ: Բառապաշարի տերմինաբանական շերտում այս հոմանիշությունը շատ սակավ է հանդիպում, և այդպես էլ պետք է լիներ. բառի տերմինային իմաստը պետք է ճշգրիտ լինի, իսկ տերմինը՝ զերծ հոմանիշությունից<sup>20</sup>: Հաճախ կիրառվում են բառեր, տերմիններ, որոնց իմաստային սահմանները հստակ չեն, այդուհանդերձ կան իմաստային նրբերանգներ, որոնք միանշանակ կերպով կարող են ենթագիտակցական ազդեցություն ունենալ. օրինակ՝ *մտահղացում – մտադրություն*: Իմաստով մոտ թվացող այս բառերը նշանակալիորեն տարբեր են: Օրինակ՝ հրամանատարի մտադրությունը կարող է լինել ընդամենը նրա ցանկությունը, մինչդեռ մտահղացումը հստակորեն հիմնավորված ծրագիր է, որը դառնում է պլանի հիմքը: ՌԻստի «մտադրությունը» ռազմական ոլորտում դարձյալ կարող է դառնալ թյուրիմացության պատճառ, թե հրամանատարը գործում է անհաշվենկատ՝ լավ չմտածված կերպով:

Ամենից առաջ զինվորականները պետք է ուշադրություն դարձնեն քաղաքացիական տեղեկատվական տեխնոլոգիաներով մշակված տեղեկույթը զինվորական նպատակներին ծառայեցնելու հանգամանքի վրա:

Այս բոլոր դիտարկումներից և վերլուծություններից գալիս ենք այն եզրակացության, որ արդի շրջանում հրատապ ու կարևոր է խոսքը իբրև հասարակության գիտակցության վրա ազդող զենք դիտելու և այդ երևույթի նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու հարցը: ՏՀՊ-ները շարունակաբար գոյություն են ունենալու մարդկության կյանքում, և դրանց հիմնական զենքը՝ խոսքը, միշտ պետք է լինի ուշադրության կենտրոնում ինչպես հասարակական մակարդակով, այնպես էլ, հատկապես, մասնագիտական լեզվաբանական ուսումնասիրությունների դաշտում: ՏՀՊ-ների զարգացումը և դրանց գործած ազդեցությունը գրեթե ստիպում են մեզանում պետական մակարդակով զգոն լինելու լեզվի անաղարտության նկատմամբ, քանի որ, ինչպես վկայում են ուսումնասիրությունները և դժվար էլ չէ գլխի ընկնել, լեզուն ազգային անվտանգության գործոն է, և դրան սպառնացող վտանգն սպառնում է նաև ազգային անվտանգությանը:

<sup>20</sup> Տես Ա. Ռ. Մարտիրոսյան, Դիտարկումներ հայերենի նորագույն ռազմագիտական տերմինաբանության զարգացման միտումների շուրջ: «ՀԲ», 2001, հմ 3:

## Ամփոփում

Խոսքի միջոցով վարվող տեղեկատվահոգեբանական պատերազմներն այսօր բավական մեծ ազդեցություն ունեն և՛ աշխարհում, և՛ մեր պետությունում\*:

Չնայած հետազոտողների այն պնդմանը, թե «տեղեկատվական պատերազմը ամենից առաջ բառային (վերբալ) պատերազմ է», ժամանակակից լեզվագիտությունը միայն մասնակիորեն է հետազոտել խոսքային ռազմավարությունները և քաղաքական հաղորդակցման խոսքային միջոցները, որոնք կարող են կիրառվել ՏՀՊ-ում<sup>21</sup>: Միննույն ժամանակ, ՏՀՊ լեզվաբանությունը չափազանց կարևոր է պետությունների դեմ վարվող տեղեկատվահոգեբանական ագրեսիային դիմագրավման պետական քաղաքականությունն ավելի արդյունավետ դարձնելու համար: Ըստ այդմ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, պետությունները ձեռնարկում են հետևյալ քայլերը.

- **հատուկ լեզվական պատրաստում:** մասնագիտական պատրաստման ժամանակ տվյալ ոլորտի մասնագետները հավասարապես ուսանում են ոչ միայն մասնագիտական գիտելիքներ և ձեռք բերում հմտություններ ու կարողություններ, այլև յուրացնում են մասնագիտական լեզուն՝ որպես հակառակորդի կիրառած խոսքային զենքի դեմ պայքարի միջոցի: Ոլորտային լեզվով գործունեություն ծավալելիս պետք է հաշվի առնել. **ա)** իրադրության ու երևույթի ենթատեքստային նշանակությունը, **բ)** տվյալ լեզվի առանձնահատկությունները, **գ)** լեզվաբանական և արտալեզվական գործոնները: Դրա շնորհիվ մասնագետները նաև կխուսափեն սխալ տերմինների ստեղծումից ու գործածությունից, քանի որ դրանք ևս ազդում են լեզվամտածողության և ազգային ինքնության վրա:
- **միասնական ոլորտային մասնագիտական լեզվական ապարատ ստեղծելու նախաձեռնություն:** մասնագիտական, այդ թվում՝ ռազմագիտական, ոլորտի լեզվի մշակման, ճիշտ տարբերակների ընտրության, տարընկալումներից խուսափելու հարցում տարիներ շարունակ կատարվում են տարաբնույթ աշխատանքներ,
- **պետական մասշտաբի հսկողություն լեզվական իրողությունների նկատմամբ:** խստիվ հսկողություն է սահմանվում բառարանային հրապարակումների նկատմամբ, քանի որ բառարաններն ունեն նորմավորող գործառույթ, հետևաբար «կամայական բառարանագրությունը» և այնտեղ տեղ գտած սխալները ամրապնդվում են բառապաշարում և դառնում նորմ:

\* Այս առումով բազմաթիվ ուսումնասիրություններից նշենք Ասա Բրիգսի՝ 1939 – 1945 թթ. պատերազմի ընթացքում կողմերի մայրենի լեզուների հետազոտությունը: Հեղինակը նշում է, որ հոգեբանական պատերազմի ժամանակ անպայմանորեն որոշակի ձևախեղումների էր ենթարկվում հառաակորդի մայրենի լեզուն, մի տեսակ կտրված էին իրենց ազգային մշակութային արմատներից, հատուկ կերպով տեղեկատվական տեքստերում տեղ էին գտնում որոշ տեսակի օտարալեզու բառեր, որոնց ընտրությունը կատարվում էր ըստ նախապես մշակված սկզբունքների (տես *Ա. Բրիգս*, Նշ. աշխ.):

<sup>21</sup> Տես *Ա. Մ. Տկովորոդնիկով, Գ. Ա. Կոպնինա*. Лингвистика информационно-психологической войны: к обоснованию и определению понятия. «Политическая лингвистика», 2016, № 1 (55):

**ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ**

**ВОЕННЫЕ ТЕРМИНЫ КАК ИНСТРУМЕНТ ВЛИЯНИЯ  
НА ОБЩЕСТВО**

*А. А. ХАЧАТРЯН, капитан, магистр филологии, ответственный секретарь  
Научно-издательского центра НИУО МО РА*

**РЕЗЮМЕ**

Изучение новейшего периода армянской истории позволяет сделать вывод, что военный компонент играет важную роль в жизни нашего общества. Исторически в предшествующие и следующие за боевыми столкновениями периоды на морально-психологическое состояние и войск, и народа осуществлялось воздействие посредством соответствующим образом структурированной информации. Подобное воздействие могло иметь как отрицательное (пораженческое, деморализующее) влияние, так и наоборот – положительное (направленное на сплочение, обретение новых сил, формирование высокого национального сознания).

На современном этапе подготовки и ведения войн роль языкового компонента в силу развития информационных технологий настолько возросло, что даже сформировалась новая отрасль науки – военная психолингвистика, а слово приобрело безопасностное значение. В результате лингвистических исследований представляется целесообразным уделение особого внимания языку военной сферы. Хотя в любой сфере нарушение чистоты языка может являться вызовом безопасности, однако на данном отрезке истории армянский язык в военной сфере может стать одновременно и оружием, и мишенью.

**MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION**

**MILITARY TERMS AS A TOOL FOR INFLUENCING  
ON THE SOCIETY**

*A. A. KHACHATRYAN, Captain, Master of Philology, Executive Secretary, Academic  
Publishing Center, NDRU, MOD, RA*

**SUMMARY**

The study of the modern period of Armenian history allows us to draw the conclusion that the military component plays an important role in the life of our society. Historically, in the periods preceding and following clashes, the moral and psychological state of both troops and the people was influenced through appropriately structured information. Such an

impact could have both a negative (defeatist, demoralizing) influence, and vice versa – positive (targeted at unity, gaining new strength, forming high national consciousness).

At the present stage of preparation for war and warfighting the role of the language component, by virtue of the development of information technology, has increased to such an extent that a new branch of science – military psycholinguistics has even formed, and the word has acquired a security connotation. Owing to linguistic research, it seems appropriate to pay special attention to the military terminology. Though the violation of the purity of language can be a security challenge in any sphere, but in the military sphere the Armenian language can become both a weapon and a target at this point in history.